ՏՊԱԳՐԱԿԱՆ և ԷՋԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ
Հ Ր Ա Վ Ե Ր

Ընդհանուր տեղեկություններ
Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (այսուհետ՝ ԹԻՀԿ) հիմնադրվել է 2000թ.-ին և գործում է որպես Թրանսպարենսի Ինթերնեշնլ (ԹԻ) կոռուպցիայի դեմ պայքարող համաշխարհային շարժման հավատարմագրված ներկայացուցչություն Հայաստանում: Կազմակերպության առաքելությունն է՝ կոռուպցիան նվազեցնելու և ժողովրդավարությունն ամրապնդելու միջոցով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում: Կազմակերպության նպատակներն են՝ աջակցել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությանը և թափանցիկ ու հաշվետու կառավարմանը, խթանել ազատ և արդար ընտրությունների անցկացումը և հանրային ռեսուրսների թափանցիկ ու հաշվետու կառավարումը:

Ծառայության նպատակ և նկարագրություն
ԹԻՀԿ-ն ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հետ համատեղ պատրաստել է «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱԿԱԴԵՄԻԱ» դասընթացի ծրագիրը և «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱԿԱԴԵՄԻԱ» դասընթացի գործնական առաջադրանքների ժողովածու: Մրցույթի շրջանակում նախատեսվում է տպագրել աշխատությունները յուրաքանչյուրից 100 կամ 200 օրինակից, ինչպես նաև մինչև տպագրելը հաղթող տպագրատնից ակնկալվում է իրականացնել աշխատությունների էջադրման աշխատանքները:

Ակնկալվող արդյունքներ
Ծառայության արդյունքում ակնկալվում է՝

- աշխատությունների տպագրություն հետևյալ պարամետրերին համապատասխան
  - ✓ **երկու աշխատությունների կազմերը**-գունավոր, 350 գրամանոց թուղթ, անփայլ լամինացված, Ա4 չափի, կազմի դիզայը պատրաստ է
  - ✓ **երկու աշխատությունների միջուկները**-գունավոր, երկկողմանի տպագրություն, 80 գրամանոց թուղթ, Ա4 չափի, թերմոթելակար
  - ✓ **աշխատությունների էջերի քանակ**-123 էջ և 79 էջ
  - ✓ **տպագրության ծավալ**-յուրաքանչյուր աշխատությունից 100 օրինակ և 200 օրինակ
- էջադրման աշխատանքներ (տպագրական ֆայլը գտնվում է զրոյական վիճակում)

Ժամկետներ
Ծառայության մատուցումը նախատեսվում է սկսել 2022թ. հունիսի 8-ից:

Տեխնիկական գնահատում
Թեկնածուի ընտրությունը կիրականացվի հետևյալ չափորոշիչների հիման վրա՝

- նմանատիպ առաջադրանքների իրականացման հաջողված փորձ (30%),
- ծառայության արժեք (70%):

Դիմելու ընթացակարգ
Հետաքրքրված տպագրատները կարող են դիմել՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1. ծառայության արժեքը,
2. կազմակերպությունների ցանկ, որոնց համար թեկնածուն կատարել է նմանատիպ առաջադրանքներ

Խնդրում ենք վերը նշված փաստաթղթերը ուղարկել lusine@transparency.am էլեկտրոնային հասցեին մինչև **2022 թ. հունիսի 5-ը օրվա վերջ**՝ որպես նամակի թեմա նշելով **«Տպագրական և էջադրման ծառայություններ»**: